ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆԹԵՂ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՔՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MOTRÉAL

ՍՐԲԱԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ, 24 Նոյեմբեր 2019 | 138 | DIMANCHE, 24 Novembre 2019

Ա. Կիրակի Յիսնակի

1er Dimanche de l'Avent

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ
ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ
ԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ (1.1-10)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (12.13-31)

Les lectures de la Bible d'aujourd'hui

1 THESSALONICIENS: 1.1-10
LUC: 12.13-31

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ԱՐԺ. Տ. ԴԱՒԻԹ. ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Célébrant:
RÉV. PÈRE DAVID MARGARYAN
Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն - ժամը 9:30-ին
Office Matines à 9h30
Ս. Պատարագ ժամը - 10:30-ին
La Sainte Messe à 10h30
Հոգեհանգիստ ժամը - 12:30-ին
Requiem à 12h30

DIACRES – ACOLYTES

Chef de choeur: M Sarkis Barsemian
Organist: M Henry Farmer

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Les lectures de dimanche

The Sunday Readings

1 ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐ 1.1-10

1Պօղոս, Սիղուանոս եւ Տիմոթէոս, Թեսաղոնիկեցիներու
եկեղեցիին՝ Հայր Աստուծմով ու Տէր Յիսուս Քրիստոսով.
2Շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր
Յիսուս Քրիստոսէ: Ամէն ատեն շնորհակալ կ՚ըլլանք Աստուծմէ՝
ձեր բոլորին համար, յիշելով ձեզ մեր աղօթքներուն մէջ,
3անդադար յիշելով ձեր հաւատքին գործը, սիրոյ աշխատանքը,
եւ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի յոյսին համբերութիւնը՝
Աստուծոյ ու մեր Հօր առջեւ, 4գիտնալով՝ սիրելի եղբայրներ՝ թէ
Աստուած ընտրեց ձեզ: 5Որովհետեւ մեր աւետարանը
քարոզուեցաւ ձեզի ո՛չ միայն խօսքով, այլ նաեւ զօրութեամբ,
Սուրբ Հոգիով ու լման վստահութեամբ: Դո՛ւք ալ գիտէք թէ
ի՛նչպէս կեցանք ձեր մէջ՝ ձեզի համար, 6եւ դուք նմանեցաք
մեզի ու Տէրոջ, ընդունելով խօսքը շատ տառապանքի մէջ՝
Սուրբ Հոգիին ուրախութեամբ: 7Հետեւաբար դուք տիպար
եղաք բոլոր հաւատացեալներուն՝ որ Մակեդոնիայի եւ
Աքայիայի մէջ են, 8որովհետեւ ո՛չ միայն Մակեդոնիայի եւ
Աքայիայի մէջ հռչակուեցաւ Տէրոջ խօսքը ձեզմէ, այլ նաեւ ամէն
տեղ տարածուեցաւ Աստուծոյ վրայ ձեր ունեցած հաւատքը,
այնպէս որ պէտք չունինք որեւէ բան խօսելու. 9քանի որ իրենք
իրենցմէ կը պատմեն մեր մասին, թէ ինչպիսի՛ մուտք ունեցանք
ձեր մէջ, եւ ի՛նչպէս դուք կուռքերէն դարձաք Աստուծոյ՝ ապրող
ու ճշմարիտ Աստուծոյ ծառայելու համար, 10եւ երկինքէն
սպասելու անոր Որդիին՝ որ ինք մեռելներէն յարուցանեց,
այսինքն Յիսուսի, որ կ՚ազատէ մեզ գալիք բարկութենէն:

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 12.13-31

13Բազմութեան մէջէն մէկը ըսաւ անոր. «Վարդապե՛տ, ըսէ՛
եղբօրս՝ որ ինծի հետ բաժնէ մեզի ինկած ժառանգութիւնը»:
14Ան ալ ըսաւ անոր. «Մա՛րդ, ո՞վ նշանակեց զիս իրաւարար
կամ բաժնող՝ ձեր վրայ»: 15Ապա ըսաւ անոնց. «Ուշադի՛ր եղէք
եւ զգուշացէ՛ք ագահութենէ. որովհետեւ մէկուն ստացուա-
ծքներուն առատութենէն կախուած չէ իր կեանքը»: 16Առակ մը
ալ խօսեցաւ անոնց՝ ըսելով. «Հարուստ մարդու մը արտերը
տուին առատ բերքեր, 17եւ ան կը մտածէր ինքնիրեն՝ ըսելով.

“Ի՞նչ ընեմ, որովհետեւ տեղ չունիմ՝ ուր բերքերս ժողվեմ”: Եւ
ըսաւ. 18“Սա՛ պիտի ընեմ. պիտի քանդեմ ամբարներս, պիտի
կառուցանեմ աւելի՛ մեծերը, հոն պիտի ժողվեմ իմ բոլոր
բերքերս ու բարիքներս, 19եւ պիտի ըսեմ անձիս. «Ո՛վ իմ անձս,
շատ բարիքներ ունիս՝ դիզուած շատ տարիներու համար.
հանգչէ՛, կե՛ր, խմէ՛ եւ զուարճացի՛ր»”: 20Բայց Աստուած ըսաւ
անոր. “Անմի՛տ, այս գիշեր անձդ պիտի պահանջուի քեզմէ.
ուստի որո՞ւ պիտի ըլլան այդ պատրաստած բաներդ”: 21Այսպէս
է ան՝ որ գանձ կը դիզէ ինքնիրեն համար, բայց չի հարստանար
Աստուծոյ մօտ»:
22Եւ ըսաւ իր աշակերտներուն. «Ուստի կը յայտարարեմ ձեզի.
“Մի՛ մտահոգուիք ձեր անձին համար՝ թէ ի՛նչ պիտի ուտէք, ո՛չ
ալ մարմինին համար՝ թէ ի՛նչ պիտի հագնիք. 23որովհետեւ
անձը կերակուրէն աւելի է, ու մարմինը՝ հագուստէն:
24Դիտեցէ՛ք ագռաւները, որոնք ո՛չ կը սերմանեն եւ ո՛չ կը հնձեն,
որոնք ո՛չ շտեմարաններ ունին, ո՛չ ալ ամբարներ, բայց
Աստուած կը կերակրէ զանոնք. դուք ո՛րչափ աւելի կ’արժէք
թռչուններէն: 25Ձեզմէ ո՞վ կրնայ մտահոգուելով կանգո՛ւն մը
աւելցնել հասակին վրայ: 26Հապա եթէ չէք կրնար ամենափոքր
բանը փոխել, ինչո՞ւ կը մտահոգուիք ուրիշ բաներու համար:
27Դիտեցէ՛ք շուշանները, թէ ի՛նչպէս կ’աճին: Ո՛չ կ’աշխատին եւ
ո՛չ կը մանեն. բայց կը յայտարարեմ ձեզի թէ Սողոմոն ալ՝ իր
ամբողջ փառաւորութեան մէջ՝ չհագուեցաւ անոնցմէ մէկուն
պէս: 28Ուստի եթէ խոտը, որ այսօր դաշտի մէջ է ու վաղը փուռը
պիտի նետուի, Աստուած ա՛յդպէս կը հագուեցնէ, ո՛րչափ աւելի
ձե՛զ, թերահաւատնե՛ր: 29Ա՛լ դուք մի՛ փնտռէք թէ ի՛նչ պիտի
ուտէք եւ ի՛նչ պիտի խմէք, ու մի՛ շփոթիք. 30որովհետեւ
աշխարհի ազգե՛րը կը փնտռեն այդ բոլոր բաները, եւ ձեր Հայրը
գիտէ թէ ասոնք պէտք են ձեզի: 31Հապա դուք խնդրեցէ՛ք
Աստուծոյ թագաւորութիւնը, ու այդ բոլոր բաներն ալ պիտի
տրուին ձեզի”»:

1 Thessaloniciens 1.1-10

1Paul, et Silvain, et Timothée, à l'Eglise des Thessaloniciens [qui est] en Dieu le Père, et en [notre] Seigneur Jésus-Christ : que la grâce et la paix vous soient données par Dieu notre Père, et par le Seigneur Jésus-Christ.

2Nous rendons toujours grâces à Dieu pour vous tous, faisant mention de vous dans nos prières. 3Et nous remettant sans cesse en mémoire l'œuvre de votre foi; le travail de votre charité, et la patience de [votre] espérance, [que vous avez] en notre Seigneur Jésus-Christ, devant notre Dieu et Père; 4Sachant, mes frères bien-aimés de Dieu, votre élection.

5Car la prédication que nous avons faite de l'Evangile au milieu de vous, n'a pas été en parole seulement, mais aussi en vertu, et en Saint-Esprit, et en preuves convaincantes, ainsi que vous savez quels nous avons été parmi vous pour l'amour de vous. 6Aussi avez-vous été nos imitateurs, et du Seigneur, ayant reçu avec la joie du Saint-Esprit la parole, accompagnée de grande affliction; 7Tellement que vous avez été pour modèle à tous les fidèles de la Macédoine, et de l'Achaïe. 8Car la parole du Seigneur a retenti de chez vous, non-seulement dans la Macédoine et dans l'Achaïe, mais aussi en tous lieux; et votre foi envers Dieu est si célèbre, qu'il ne nous est pas besoin d'en rien dire. 9Car eux-mêmes racontent de nous quel accès nous avons eu auprès de vous, et comment vous avez été convertis des idoles à Dieu, pour servir le Dieu vivant et vrai; 10Et pour attendre des Cieux son Fils Jésus, qu'il a ressuscité des morts, et qui nous délivre de la colère à venir.

Luc 12.13-31

13Et quelqu'un de la troupe lui dit : Maître, dis à mon frère qu'il partage avec moi l'héritage. 14Mais il lui répondit : ô homme! qui est-ce qui m'a établi sur vous pour être votre juge, et pour faire vos partages? 15Puis il leur dit : voyez, et gardez-vous d'avarice; car encore que les biens abondent à quelqu'un, il n'a pourtant pas la vie par ses biens. 16Et il leur dit cette parabole : Les champs d'un homme riche avaient rapporté en abondance; 17Et il pensait en lui-même, disant : que ferai-je, car je n'ai point où je puisse assembler mes fruits? 18Puis il dit : voici ce que je ferai : j'abattrai mes greniers, et j'en bâtirai de plus grands, et j'y assemblerai tous mes revenus et mes biens; 19Puis je dirai à mon âme : mon âme, tu as beaucoup de biens assemblés pour beaucoup d'années, repose-toi, mange, bois, et fais grande chère. 20Mais Dieu lui dit : insensé, en cette même nuit ton âme te sera redemandée; et les choses que tu as préparées, à qui seront-elles? 21Il en est ainsi de celui qui fait de grands amas de biens pour soi-même, et qui n'est pas riche en Dieu.

22Alors il dit à ses Disciples : à cause de cela je vous dis, ne soyez point en souci pour votre vie, de ce que vous mangerez; ni pour votre corps, de quoi vous serez vêtus. 23La vie est plus que la nourriture, et le corps est plus que le vêtement. 24Considérez les corbeaux, ils ne sèment, ni ne moissonnent, et ils n'ont point de cellier, ni de grenier, et cependant Dieu les nourrit; combien valez-vous mieux que les oiseaux? 25Et qui est celui de vous qui par son souci puisse ajouter une coudée à sa stature? 26Si donc vous ne pouvez pas même ce qui est très-petit, pourquoi êtes-vous en souci du reste? 27Considérez comment croissent les lis, ils ne travaillent, ni ne filent, et cependant je vous dis que Salomon même dans toute sa gloire n'était point vêtu comme l'un d'eux. 28Que si Dieu revêt ainsi l'herbe qui est aujourd'hui au champ, et qui demain est mise au four, combien plus vous [vêtira-t-il], ô gens de petite foi? 29Ne dites donc point : que mangerons-nous, ou que boirons-nous? et ne soyez point en

suspens. 30Car les gens de ce monde sont après à rechercher toutes ces choses; mais votre Père sait que vous avez besoin de ces choses. 31Mais plutôt cherchez le Royaume de Dieu, et toutes ces choses vous seront données par-dessus.



Հոգեւոր Հովիւի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, Ամէն

«Մեծահարուստի մը արտերը առատ բերք տուին. եւ ան խորհեցաւ ու ըսաւ. «Տեսնեմ՝ ինչ կրնամ ընել, քանի որ բերքս կուտակելու տեղ չկայ: Գիտեմ, թէ ինչ պէտք է ընեմ. կը քանդեմ իմ շտեմարաններս եւ աւելի մեծերը կը շինեմ ու այնտեղ կը հաւաքեմ ցորենը եւ իմ ամբողջ բարիքներս. Եւ ես ինծի կ'ըսեմ՝ ո՛վ մարդ, շատ տարիներու համար ամբարուած բազում բարիքներ ունիս, հանգի՛ստ ըրէ, կե՛ր, խմէ՛ եւ ուրա՛խ եղիր»: Աստուած անոր ըսաւ. «Անմի՛տ, ճիշդ այս գիշեր հոգիդ քեզմէ պիտի պահանջուի, իսկ ինչ որ պատրաստած ես, ո՞րուն պիտի ըլլայ»: Նոյնպէս է նաեւ ան, որ իր անձին համար գանձ կը հաւաքէ եւ Աստուծմով չհարստանար»: (Ղուկաս 12: 16-21)

Աստուածասէր քոյրեր եւ եղբայրներ, այս առակին միջոցով, որ կը հանդիսանայ օրուան հոգեւոր սնունդը, Տէրը կը նախազգուշացնէ մեզ ընչաքաղցութեան արատէն, այսինքն՝այս աշխարհի բարիքները վայելելու համար ունեցուածք ձեռք բերելու կիրքէն: Մարդու կեանքը, անոր բարեկեցութիւնը կամ երջանկութիւնը կախուած չեն անոր ունեցուածքի շատ ըլլալէն: Բայց անմիտ հարուստը, գալիք կեանքի մասին նուազագոյն մտահոգութիւն չունենալով կը մտածէ միայն թէ ինչպէս օգտագործէ սեփական հարստութիւնը՝ ներկայ կեանքը վայելելու համար: Ան մտադիր չէ նոյնիսկ ոչ Աստուծոյ եւ ոչ ալ հոգիի մասին խորհելու, այլ՝ անոր տենչն է միայն անասնական, զգացական հաճոյքները. «Հանգիստ ըրէ, կեր, խմէ եւ ուրախ եղիր»: Դիտելով այս մարդուն, որ մտադրած է իր հարստութիւնը պահպանել, կարծես անոր անբաժան մասը ըլլար, Քրիստոս կ'ըսէ. «Անմիտ, ճիշդ այս գիշեր հոգիդ քեզմէ պիտի պահանջուի», ապա ի՞նչ կրնաս ընել…

Յարգելի հաւատաւորներ՝ բոլորիս, թիկունքին կանգնած է մահը, որուն մասին ամէն քայլափոխին մեզ կը յիշեցնէ Աւետարանը, բայց ոչ թէ անոր համար, որ մահուամբ վախցնէ, այլ՝որպէսզի կեանքին հաղորդէ նոր՝ այլ ճանապարհով ամենեւին անհասանելի խորութիւն: Մենք կ'ապրինք շատ մակերեսային կեանքով. մենք կ'ապրինք բազմաթիւ նիւթերով, որոնք չափազանց մանր են, որպէսզի այդ մանրուքով գոհանայ մարդուն սիրտն ու հոգին: Ինչքա՜ն սին, աննպատակ, անպտուղ խոհեր կ'ունենանք մէկ օրուան ընթացքին. որքա՜ն զգացումներ յաջորդած են մէկը միւսին ետեւէն՝ ոչ մէկ խոր հետք թողելով, այլ այնպէս՝զուր, ինչպէս ամպերը կ'անցնին երկինքով: Իսկ մահը զարմանալիօրէն այնքա՜ն մօտ է, որ ամէն ինչ կրնայ իր տեղը դնել:

Յատկապէս այն պատճառով, որ մօտալուտ մահը, կեանքը նոյնքան անգնահատելի կը դարձնէ: Ոչ այն իմաստով, որ անհրաժեշտ է պայքարիլ, որ չմեռնինք, այլ այն իմաստով, որ իր ամբողջ բովանդակութիւնը կրնայ դառնալ այնպէս խորունկ, ինչպիսին միայն մահը կրնայ անոր դարձնել: Ամէն արտասանուած խօսքը կրնայ ըլլալ վերջինը. մի՞թէ այն պէտք է ըլլայ դատարկ, աննշան կամ թէ աւելին վատ՝ ջղային, դառն, չար, աւերիչ: Ամէն արարք կրնայ վերջինը ըլլալ, ինչո՞ւ այն չըլլայ մարդկային յարաբերութիւններուն մէջ եղած ամենախոր եւ

սքանչելի արտայայտութիւնը, իրագործումը: Մենք սա կը մոռնանք, քանի որ մեզ կը թուի, թէ առջեւնիս այնքան ժամանակ կայ, որ կը կարողանանք ուղղել սխալները, բուժել հոգիի վէրքերը, որ մխիթարենք մարդուն: Սակայն կրնայ ուշ ըլլալ. կրնայ մահանալ մեզմէ ոեւէ մէկը... Արդէն ուշ կ'ըլլայ մխիթարել, փաղաքշել, ուրախացնել, ուշ կ'ըլլայ վերջին անգամ երջանկացնել մարդուն այս երկրին վրայ...

Մահը մեր աչքերուն առջեւ դրուած է Աւետարանին կողմէ, Քրիստոսին կողմէ, մեր կեանքով իսկ՝ ոչ թէ անոր համար, որ մեզ զարհուրեցնէ, այլ՝ որպէսզի մենք ապրինք խորունկ՝ մեր մարդկային նրբազգաց սրտի խորութեան եւ մեծ, խորիմաց մտքի համապատասխան: Ուստի մեր սրտի ու մտքի՝ մեր կեանքի, գանձարանին մէջ կուտակենք ոչինչ, ինչ որ չափ-ազանց չնչին է, որմէ մենք ալ փոքրոգի կը դառնանք: Երկրաւոր գանձեր կուտակելու փոխարէն, մեզի անհրաժեշտ է հարս-տանալ Աստուծմով, այսինքն՝ հոգալ յաւիտենական, անա-պական հարստութեան՝ առաքինութիւններու ձեռք բերմամբ, եւ այդ կարելի է ձեռք բերել՝ երկրաւոր հարստութիւնը օգտա-գործելով, օգտագործելով ոչ թէ մարմնի ստոր ու չնչին հաճոյք-ներուն, այլ ամէն տեսակ բարի եւ յաւիտենականութիւն պարգե-ւող գործերու համար, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Օրհնութեամբ՝

Տէր Դաւիթ քահանայ Մարգարեան

Résume du Sermon

"Gardez-vous de toute âpreté au gain, car la vie d'un homme ne dépend pas de ses richesses"(Luc 12,16-21)
Jésus invite ses disciples à faire preuve de maturité, donnant l'exemple d'un homme riche qui est bien tranquille car il a placé ses biens en sécurité et vivra une vie paisible.
L'homme est la seule créature qui sait qu'elle va mourir, et l'homme sage est celui qui a un projet pour la vie après la vie qui est la plus longue et sana fin.
S'enrichir en Dieu c'est de vivre en suivant les commandements de Jésus, adorant son

Père et aimant son prochain. Plus nous serons riches pour l'amour de Jésus plus nous aurons l'assurance pour le Salut et la vie éternelle.
Bref s'enrichir pour Dieu c'est s'appauvrir pour lui car à l'heure de notre mort le Seigneur sera notre seule richesse.

En Foi et en Prière
Père David Margaryan, Prêtre paroissial

ԿԱՐԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Արդեօք Գիտէի՞ք թէ.-

- **Քահանան ո՞ր դէպքերուն կրնայ Ս. Հաղորդութիւն չտալ ցանկացողին:**
  Եթէ տուեալ անձը ապաշխարութեան մէջ է կամ ֆիզիքական առումով անմաքուր է, ուստի քահանան չի կրնար Ս. Հաղորդութիւն տալ: Բնականաբար, Ս. Հաղորդութիւն կարելի չէ տալ նաեւ՝ չմկրտուածին, որովհետեւ ան Եկեղեցւոյ անդամ չէ եւ առանց մկրտութեան չկրնար անդամ ըլլալ Եկեղեցւոյ: Եթէ քահանան կը ճանչնայ տուեալ անձին եւ գիտէ, որ ան ծանր մեղքի մէջ է եւ չէ զղջացած, ապաշխարած եւ խոստովանած մեղքը կամ չի հաւատար, որ սրբագործուած հացն ու գինին Տիրոջ Մարմինն ու Արիւնն են, ապա այդ դէպքերուն եւս պէտք չէ Ս. Հաղորդութիւն տալ:

- **Ս. Հաղորդութիւնը կը տրուի բոլորին նոյն գաւաթէն, արդեօք վտանգաւո՞ր չէ այդ կերպը վարակիչ հիւանդութիւններու փոխանցման համար:**
  Մինչեւ այսօր որեւէ դէպք յայտնի չէ Ընդհանրական Եկեղեցւոյ պատմութեան մէջ, որ Հաղորդութեան պատճառով մարդիկ հիւանդանան կամ վարակուին: Մարդիկ նոյնիսկ հաղորդուած են համաճարակներու ժամանակ, բայց չեն հիւանդացած: Պէտք չէ մոռնալ, որ Եկեղեցւոյ այս խորհուրդը նաեւ բժշկող զօրութիւն ունի: Աներեր հաւատքով եւ ոչ թէ կասկածամտութեամբ պէտք է մօտենալ Ս. Հաղորդութեան: Իսկ մեր մէջ նման միտքեր կամ թերահաւատութիւն կը սերմանէ միայն սատանան, որպէսզի քիչ կամ ընդհանրապէս չհաղորդուինք: Բացի այդ, սկիհին մէջ մնացած Ս. Հաղորդութիւնը վերջաւորութեան կը ճաշակէ պատարագիչ հոգեւորականը: Եթէ նման վտանգ ըլլար, ուրեմն բազմաթիւ հոգեւորականներ այդ պատճառով ողջ պիտի չըլլային:

Շաբթուայ խորհրդածութիւնը

- «Ի՞նչն է սխալ քայլերու նշանը՝ ջղայնութիւնը: Ի՞նչն է բարի արարքներու նշանը՝ հոգիի խաղաղութիւնը»:

  Սիմէոն Աթոսացի

- «Սկսիր պայքարիլ հին սովորութիւններու դէմ անոնք մէկ առ մէկ վերացնելու համար: Պայքարիր սուտի եւ երդումներու դէմ, զերծ մնալով զպարտութիւններէն եւայլն... մէկ առ մէկ... մինչեւ յաղթահարես զանոնք Յիսուսի շնորհով... մինչեւ յաղթահարես բոլոր վատ սովորութիւնները եւ դառնաս նոր մարդ»:

  Ս. Կիւրեղ VI Ալեքսանդրացի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր Տաճարի Կիրակնօրեայ Վարժարանը կարիքն ունի ուսուցիչներու՝ դասաւանդելու գծագրութեան դասընթացքներ:

Հետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել քարտուղարութեան՝ **(514) 279-3066**
տուեալները ուղարկել հետեւեալ Ե-Հասցէին
stgregorychurch@gmail.com

Շնորհակալութիւն

ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ
ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆԻ

Մեր սիրելի հաւատացեալներուն կը տեղեկացնենք, որ Հոգեհանգստեան Պաշտօն խնդրելու համար Եկեղեցի հեռաձայնել պահանջուած հոգեհանգիստի թուականէն մէկ շաբաթ առաջ
մինչեւ այդ շաբթուայ Հինգշաբթի կ.ե. ժամը 5-ը:

Ե-Հասցէով (e-mail) խնդրուող հոգեհանգստեան պաշտօն կամ որեւէ այլ խնդրանք պէտք **է հաստատուին եւ վերստուգուին** քարտուղարութեան հետ **հեռաձայնելով Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւին:**

Շնորհակալութիւն

Եկեղեցւոյ Գրասենեակ

ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔ

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԱՂՕԹՔ

Քու անհուն խնամքովդ՝ դուն հոգա իմ
հոգեւոր ու մարմնաւոր պէտքերս,
եւ այնպէս ըրէ՝ որ ամէն բանի մէջ քեզի յուսամ
եւ ապաւինիմ: Թոյլ տուր որ միշտ
շնորհակալութիւն յայտնեմ ինծի տրուած բոլոր
պարգեւներուդ համար, եւ գոհունակ սրտով
բաւարարուիմ իմ վիճակովս ու պայմաններովս:
Եռո՛ւ պահէ զիս ծուլութենէ եւ պարապութենէ:
Փրկէ՛ զիս չար ընկերներէ, չար օրինակներէ,
եւ բոլոր վտանգներէն ու փորձութիւններէն:
Եւ ընդունէ՛ հօրս եւ մօրս, եղբայրներուս եւ
քոյրերուս, ամբողջ ընտանիքիս եւ
բարեկամներուս,
ինչպէս նաեւ բոլոր մարդոց ալ յիշէ՛ քու սիրոյդ
մէջ,
եւ բոլորին ալ առատօրէն տո՛ւր քու բարի
պարգեւներդ,
թէ՛ հոս եւ թէ՛յաւիտենական կեանքի էջ:
Որովհետեւ քո՛ւկդ են փառքը, պատիւն
ու զօրութիւնը յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

PRIÈRE DES JEUNES GENS

Avec amour infini, prends soin de mes besoins
spirituels et charnels et ainsi,
fais en sorte, qu’en toute circonstance je
t’espère et mette ma confiance en toi.
Accorde-moi de te rendre gloire pour tous les
dons
que tu m’as donné et d’être reconnaissant pour
ma situation
et mes conditions de vie.
Eloignes-moi de la paresse et d’oisiveté.
Sauves-moi des mauvais amis, des mauvais
exemples,
de toutes les tentations et dangers.

Reçois ma prière pour mes parents, mes
sœurs, mes frères, toute ma famille ainsi que
tous les hommes.

Dans ton amour, souviens-toi d'eux
et donne leur en abondance tous tes dons,
non seulement ici bas, mais aussi dans la ville
éternelle,
car c'est à toi qu'appartiennent la gloire
et la puissance pour l'éternité de l'éternité.
Amen.

INVITATION

À l'occasion du 49-ème anniversaire de l'achat,
de la consécration et dénomination de la Cathédrale
Armenienne
St. Grégoire l'Illuminateur de Montréal

Le Père David Margaryan
et le Conseil Paroisial de la Cathédrale

ont l'honneur de vous convier

dimanche 15 decembre 2019 à 10:30h

à la Sainte Messe solonnelle qui sera célébrée
par Sa Grace Monseigneur
ABGAR HOVAKIMYAN
Primat Diocese Armenienne du Canada

**Prière d'Action de Grâce pour les bienfaiteurs
de la Cathédrale**

*Office de Requiem pour le repos des âmes des disparus,
serviteurs et bienfaiteurs de la Cathédrale*
La Messe sera interprétée par la chorale ''Gomidas''
Sous la direction de Sarkis Barsemyan

*A l'issue de la Sainte Messe, une réception aura lieu
dans la salle Marie Manoogian organisée
par l'Union des Dames et Auxiliares de la Cathédrale,
qui sera précédé par le programme musical.*

Bureau de l'église

HOLIDAYS

Saturday, November 23, 2019

COMMEMORATION OF STS. GREGORY THE THAUMATURGE, PONTIFF NIKOGHAYOS AND BISHOP MURON

St. Gregory the Thaumaturge (Wonderworker) was born in the town Neocaesaria of Pontos (Sebastia), in the family of a nobleman, in about 210 AD. Gregory was going to study jurisprudence and rhetoric, but another way was predetermined by God for him and his brother. Gregory and his brother receive education in Athens and then in Palestinian Caesaria. Their teacher was Vorogines who was one of the most prominent Christian scientists of that time. Returning to Neocaesaria, he is ordained as the Bishop of the town. According to the tradition during the period of Gregory's ordination there were hardly 17 Christians in Neocaesaria, and when he passed away there were only 17 heathens. He has deserved the epithet "Thaumaturge" for the numerous miracles relating to his name and reputation. St. Gregory is also the author of many theological works. He passed away in 270 AD.

Pontiff Nikoghayos (Nicholas the Bishop) was born in the town Batara (presently nearby Antalia), in the province of Likia, in Asia Minor. His rich and pious parents pass away when he was a baby, and he is brought up and educated by his Uncle Bishop Nikoghayos Yerets. The evangelical commandment: "... sell all you have and give the money to the poor..." (The Gospel according to Mathew 19:21) becomes the essence of the life of Nikoghayos. He takes care of the poor, the sick, the prisoners and the orphans. By the will of the people he becomes the Bishop of Smyrna. During the period of Christians' persecutions, he is exiled, but however, continues to preach the Gospel everywhere. After the establishment of peace, he returns to his residence and participates in the Ecumenical Council of Nicaea in 325 Ad. He has passed away in 326 AD. He is one of the most beloved saints of the Universal Church and is more famous by the name Santa Claus.

Bishop Muron (Myron) was born in about 350 AD. He was a great wonder-worker and was familiar for his mercy and charity. During the period of Christians' persecutions, When St, Muron was the Bishop of Crete, he impatiently waiting for his martyrdom, supports and encourages everybody, By the will of God he lives up to old age and passes away at the age of 100.

Monday, November 25, 2019

COMMEMORATION OF THE MARTYR ST. ASTVATSATOOR

St. Astvatsatoor was martyred during the reign of the Persian King Khosrov. He was a Persian magus, who comes to Armenia together with Denshapouh and, witnessing there the martyrdom of St. Gregory Razhik, believes in Christ and is baptized. He is martyred by the Persians and is buried by the Catholicos Nerses II, in Dvin.

Monday, November 25, 2019

COMMEMORATION OF STS. JULIANE AND VASILOUHIE

In Church calendars there are many virgins named Juliane and Vasilouhie. However, the virgins commemorated according to the Armenian Church Calendar, are from the town Nikomedia.

St. Juliane (Juliana) had made the vow of celibacy since childhood. During the period of Christians' persecutions by the King Dioklethianos she refuses to marry a young

heathen man and because of it is taken to the court. When after many torments and trials the saint is taken to be burnt, the fire goes out. St. Juliane is beheaded at the age of 19, in 304 AD.
Vasilouhie (Basilla) was a nine-year-old girl. She is subjected to torments during survives all torments and trials and remains unharmed, and the judge, witnessing St. This, is converted the Christianity. She passes away in 309 AD.

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE REPOS DE L'ÂME

SERVICE FOR THE REPOSE OF SOUL

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ԿԻՐԱԿԻ, 24 ՆՈՅԵՄԲԵՐ 2019

Թինա Սօսոյեան Տէպօյի եւ Ժան Տէպօյի եւ
զաւակներուն՝ Կապրիյէլլայի եւ Նիքօլայի,
Տ. եւ Տիկ. Գէորգ եւ Լիտիա Սօսօյեանի եւ
զաւակներուն,
Տ. եւ Տիկ. Ռաֆֆի եւ Թանիա Սօսոյեանի,
Մարիան Սօսոյեանի,
Եւ համայն Սօսօյեան եւ Տէպօ ընտանիքներու,

Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ հօր, եղբօր, հօրեղբօր եւ
մեծ հօր՝

ՏՕՔԹ. ՄԿՐՏԻՉ ՊՕՂՈՍ
ՍՕՍՈՅԵԱՆԻ
(DR. MEGUERDITCH BOGHOS SOSSOYAN)

Մահուան 10-րդ տարելիցին առիթով

Տիկ. Սիլվա Գարաօղլանեանի եւ ընտանիքին,

Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ եղբօր եւ
հարազատներուն՝՝

ՅԱԿՈԲ ՊԷՔԱՐԵԱՆԻ
(HAGOP BEKARIAN)
ԵՒ
ՆԱՅԻՐԻ ՄԱՐԻԱ ՊԷՔԱՐԵԱՆԻ
(NAIRI MARIA BEKARIAN)

Մահուան 4-րդ տարելիցիներուն առիթով
ԵՒ
ՍԱՐԳԻՍ ՊԷՔԱՐԵԱՆԻ
(SARKIS BEKARIAN)
Մահուան 15-րդ տարելիցին առիթով
Ինչպէս նաեւ՝
ԽԱՉԱՏՈՒՐ ԵՒ ՄԱՐԻԱՄ
ՊԷՔԱՐԵԱՆԻ
(KHATCHADOUR & MARIAM BEKARIAN)
Հոգիներուն ի հանգիստ

Ննջեցեալներու համար աղօթք

Ո՛վ բազմագութ Աստուած, կ'աղաչեմ եւ կը խնդրեմ Քեզմէ մեր ազգին բոլոր հին ու նոր, հաւատքով եւ յոյսով ի Քեզ ննջածներու համար: Մանաւանդ, Քու մօտդ ննջող իմ մարմնաւոր եւ հոգեւոր ծնողներուն, եղբայրներուն, քոյրերուն, ազգականներուն, սիրելիներուն, բարեկամներուն, բարիին մէջ կրթող հոգեւոր վարդպետներուն, ուսուցիչներուն, մեր բոլոր աշխատաւորներուն եւ երախտաւորներուն համար, որպէսզի Քու գալստեանդ մեծ օրը ողորմութեամբ յիշես եւ թողութիւն շնորհես անոնց բոլոր մեղքերուն ու սխալներուն եւ Քու աջակողմեան դասիդ սուրբերուն հետ դասես ու թոյլ տաս լսելու Քու երանաւէտ խօսքդ, թէ՝ «Եկէ՛ք իմ Հօրս օրհնածները»: Եւ, ըստ մեզի հանդէպ անոնց կատարած երախտիքներուն՝ մէկի փոխարէն բիւրապատիկ յատուցես անոնց հոգիներուն, իսկ մեզի անոնց պարտքերէն անպարտ դարձնես:
Քեզ փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Սիմէոն Կաթողիկոս
Երեւանցի

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Don à l'Église | **Donation for the Church**

CHURCH:

Mr. Vicken Aprahamian $150, Mrs. Nairy Gunjian $100,
Manoir Gouin Seniors $92.

HOKEHANKISD:

THE LATE PAPEL ERDOGMUS:

Mr. & Mrs. Ayk & Rina Bagdasarian, Mr. Herman Erdogmus, Mr. & Mrs. Ari Bagdasarian $200, Mr. Pierre Ghannoum, Mr. & Mrs. Agop Gurunlu $100, Mr. & Mrs. Andranik Sarkissian $50.

THE LATE MARKAR OZARARAT:

Mr. & Mrs. Yetvart & Margaret Paylan $500, Mr. & Mrs. Boghs Armutlu, Mrs. Vilma Bulur, Mr. & Mrs. Krikor & Siran Yasa, Ipek Family, Mrs. Arsaluys Gerger, Mr. & Mrs. Arsen & Ayda Unlusoy $50.

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Ս. ՊՍԱԿԱՂՐՈՒԹԵԱՆ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի
Հոգեւոր Հովիւն ու Ծխական Խորհուրդը
կը շնորհաւորեն Պարպարեան եւ Շուէնյէր ընտանիքները
իրենց զաւակներուն՝
16 Նոյեմբեր 2019
Ռազմիկ Պարպարեանի եւ Խրիսթին Շուէնյէրի
Ս. Պսակաղրութեան ուրախ առիթով:

CONGRATUALTIONS

The Parish Priest and the Parish Council
of the St-Gregory the Illuminator Armenian Cathedral extend their congratulations to Barbarian & Choinière families on the occasion of their Son's and daughther's Wedding
November 16, 2019
Razmig Barbarian & Christine Choinière

ՄՈՆԹՐԷԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ՝
ԳԵՐԾ. Տ. ԱԲԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ
ԱՌԱՋՆՈՐԴ ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ՀԱՄԵՐԳ ՆՈՒԻՐՈՒԱԾ

ՀԱՆՃԱՐԵՂ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

ԾՆՆԴԵԱՆ 150 ԱՄԵԱԿԻՆ

Սաշա Ճիհանեան

ԿԱՁՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝ ԵԿԵՂԵՑՒՈՅ
ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Ելոյթ կ'ունենան հանրածանօթ
արուեստագէտներ

Սարգիս Պարսէվեան

**Շաբաթ, 30 Նոյեմբեր
2019 երեկոյեան ժամը
8-ին**

Եկեղեցւոյ մէջ:

Հանդիսութեան աւարտին՝
հիւրասիրութիւն «Վաչէ Յովսէփեան»
սրահին մէջ:
Մանրամասնութեան համար հեռաձայնել
(514) 279-3066
Ողջ հասոյթը կը յատկացուի
Վերանորոգութեան Դրամարշաւին:
Մուտքի նուէր՝ $30

Գոհարմանուկեան

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Cathédrale St. Grégoire l'Illuminateur à Outremont



Sous le patronage de Son Éminence Monseigneur Abgar Hovakimyan, Primat du Diocèse Arménien au Canada

Concert Dédié

Au prestigieux Prêtre Komitas , Organisé par le Conseil Paroissial

Sasha Djihanian

À l'occasion du 150ième anniversaire de naissance

Avec la participation des artistes renommés

Sarkis Barsemian

Samedi, le 30 novembre 2019 à 20:00 à l'église St. Grégoire

Légers collations seront servies après le concert dans la Salle Vatché Hovsepian
Pour plus de détails, svp appeler à (514) 279-3066
Admission : $30

Gohar Manvelyan

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN

ԿԻՐԱԿԱՄՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Սիրով կը յայտնենք, թէ
Շաբաթ, 30 Նոյեմբեր 2019-ի
երեկոյեան ժամը՝ 5-ին, երեկոյեան
(Կիրակամտից) ժամերգութիւն պիտի
կատարուի Մոնթրէալի Սբ. Գրիգոր
Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցւոյ մէջ։

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացեալները
ներկայ գտնուելու հոգեպարար այս
արարողութեան։

Օրհնութեամբ՝
Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեան

49-րդ/th

ՏԱՐԵԴԱՐՁ

Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցւոյ Գնման, Օծման եւ Անուանակոչութեան

ANNIVERSARY

of the St. Gregory the Illuminator Armenian
Cathedral of Montreal

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

Հովանաւորութեամբ
Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի
Բարեխնամ Առաջնորդ Գանատահայոց Թեմին

Կիրակի, 15 Դեկտեմբեր 2019
Sunday, December 15th, 2019
Սկիզբ Ս. Պատարագի առաւօտեան ժամը 10:30-ին

Պատարագիչ՝
Առաջնորդ Սրբազան Հայր

Յաւարտ Ս. Պատարագի
Տօնական ճաշկերոյթ եւ Գեղարուեստական Յայտագիր
«Մարի Մանուկեան» սրահին մէջ

Anniversary Banquet & Cultural Program in «Marie Manoogian» Hall

Տեղերու ապահովման համար հաճեցէք հեռաձայնել
եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066
Մինչեւ 10 Դեկտեմբեր 2019

Please call to reserve (514) 279-3066
till December 10th, 2019

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԿԱՂԱՆԴԻ ՀԱՆԴԷՍ

Օրհնութեամբ՝
Գանատահայոց Թեմի Առաջնորդ
Գերշ. Տ. Աբգար եպս. Յովակիմեանի

Կազմակերպութեամբ՝
ACYOC Մոնթրէալի «ԿԱՄԱՐ» Երիտասարդաց Միութեան
Ամանորեայ թատերական ներկայացում
''ÉGLANTINE ET LE CAPITAINE POMPIDOU NOEL''

Կիրակի, 22 Դեկտեմբեր 2019 կ.ե. ժամը 2:00-ին

«Մարի Մանուկեան» սրահին մէջ
615 Avenue Stuart
Outremont, QC H2V 3H2

· Հաճելի մանկական ներկայացում
· Տօնական հիւրասիրութիւն
· Վիճակահանութիւն
· Նուէրներ երեխաներուն

Մանրամասներու եւ ամրագրման համար
կը խնդրուի հեռաձայնել
(514) 928-2536 Գագիկ,
(514) 792-2866 Փառանձեմ,
(514) 279-3066 քարտուղարութիւն

Մուտքի նուէր՝$20

Christmas and New Year's Party for Children

With the blessings of His Grace
Bishop Abgar Hovakimyan
Primate of the Armenian Diocese of Canada

ACYOC Montreal's "Kamar" Youth Association
presents:
New Year's theater show:
''ÉGLANTINE ET LE CAPITAINE POMPIDOU NOËL''

Sunday, 22 December 2019 at 2:00pm

''Marie Manoogian'' Hall
615 Avenue Stuart
Outremont, QC H2V 3H2

- Fun theater performance
- Delicious dishes
- Lottery
- Gifts for children

For details and reservations, please call:
Gagik: (514)928-2536
Parandzem: (514)792-2866
Secretariat: (514)279-3066

Entrance fee: $ 20

Յարգելի՛ ծնողներ, կը տեղեկացնենք, որ սոյն տարուայ սկսած Սեպտեմբեր ամիսէն նոր որակով եւ ընդլայնուած ծրագիրով կը վերամեկնարկէ Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի կիրակնօրեայ վարժարանը իր 2019-2020 ուսումնական տարին:

Կիրակնօրեայ վարժարանը նոր ուսումնական տարեշրջանին կ'առաջարկէ հետեւեալ դասընթացքները.

1. Հայոց պատմութիւն եւ հոգեւոր գիտելիքներ
2. Մանկապատանեկան երգչախումբ
3. Շախմատ (ճատրակ)
4. Նկարչութիւն
5. Հայոց լեզու
6. Խօսքի մշակոյթ (թատրոն, ասմունք):
7. Դաշնակի Դասընթացք – (Մանրամասնութեան համար հեռաձայնել Վարժարանի պատասխանատուներուն՝ Հայկին եւ Ալինային):

Կը խնդրենք ընդունիլ առ ի գիտութիւն, որ կատարուած են որոշակի փոփոխութիւններ Կիրակնօրեայ Վարժարանի դասընթացքներու կազմակերպման ընթացքին մէջ.

- դասընթացքները պիտի սկսին ժամը 10:30-ին եւ կ'աւարտին՝ ժամը 14:00-ին, որոնց ընթացքին տեղի կ՚ունենայ հիւրասիրութիւն:
- դասընթացքներու համար կ'ակնկալուի ձեր խորհրդանշական մասնակցութիւնը՝ 1 փոքրիկի պարագային ամիսը $15, երկուքի պարագային՝ $25, իսկ երեքի պարագային՝ $33:

Միաժամանակ կը տեղեկացնենք, որ ներկայիս կը քննարկուի նաև փոխադրամիջոցի ապահովման հարցը (լրացուցիչ վճարման դիմաց):

Ձեր բոլոր առաջարկները կրնաք ներկայացնել

Կիրակնօրեայ Վարժարանի պատասխանատուներուն

անձամբ կամ հետեւեալ Ե-հասցէներով (e-mail)՝

haykpetrosyan80@gmail.com կամ alinabezhanyan1@yahoo.com:

Փոքրերու արձանագրութեան համար հեռաձայնել՝

Ալինա (438) 889-8167 Հայկ (514) 619-7098

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Մեր երեխաներուն համար

Պահպանե՛նք ժառանգութիւնը, կերտե՛նք ապագան
Մոնթրէալի Սբ.Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ եկեղեցին շտապ վերանորոգման կարիքն ունի:

Ճարտարապետական ուսումնասիրութիւնները ի յայտ բերին թէ եկեղեցւոյ արտաքին շաղախներն ու ենթակառոյցները անմիջական վերանորոգման կը կարօտին:Յառաջիկայ հինգ տարիներու ընթացքին, գաղութս պէտք է հաւաքէ բաւական նշանակալի գումար մը:Իսկ այս առաջին փուլը կը կարօտի $ 250,000 ի:
Շտապ:
Եկէ՛ք միասնաբար ապահովենք մեր գաղութի ապագան:

POUR NOS ENFANTS

Pour protéger notre héritage : Pour bâtir notre future

L'église St. Grégoire l'Illuminateur de Montréal a un besoin URGENT d'initier et d'exécuter des restaurations majeures à la structure de la bâtisse

Les études architecturales et d'ingénierie ont conclu que la bâtisse de notre élégante église cathédrale de 90 ans nécessitera pour les cinq (5) années prochaines d'importantes

restaurations de la maçonnerie de pierre sur son extérieur, des supports des vitraux plombés des fenêtres dans son intérieur et d'autres modifications structurelles et ceux-ci requièrent un montant assez élevé. La phase 1 de ses travaux estimés à $250,000 a déjà démarré

Svp donnons-nous la main pour ramasser les fonds nécessaires et assurer le succès de cette initiative communautaire

Svp donnons-nous la main pour ramasser les fonds nécessaires et assurer le succès de cette initiative communautaire

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

Օրհնութեամբ Գանատահայոց Թեմի Բարեխնամ
Առաջնորդ Գերաշնորհ
Տէր Արգար Եպիսկոպոս Յովակիմեանի

Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր եկեղեցւոյ

«Կոմիտաս» Դպրաց Դասը
Յունուար 2020-ին կը նախատեսէ
կազմակերպել

«ԿԱՏԱԿ ԵՐԳ»

խորագրով երեկոյ մը

Յայտագիրը կը պարունակէ.

- հայկական ժողովրդական, սիրային եւ կատակերգի ճոխ երգացանկ մը, որ պիտի ներկայացուի գեղարուեստական բեմադրութեամբ:
- Յայտագրի ընթացքին պիտի մատուցուի հայկական աւանդական ուտեստ եւ հայկական գինի։

Յայտագրին մաս կազմել փափաքողները
մինչեւ 15 Հոկտեմբեր 2019
կրնան դիմել «Կոմիտաս» Դպրաց Դասի խմբավար
Տիար Սարգիս Պարսեմեանին՝ **Barsemians@Gmail.com**

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՉՐՈՅՑ

Տ. ԴԱՒԻԹ ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՀԵՏ

Ամէն Հինգշաբթի երեկոյեան՝ Ժամը 7:00-ին Եկեղեցւոյ մէջ

Études bibliques et discussions avec le R.P David Margaryan

Chaque Jeudi à 19hoo à l'église

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները մասնակից ըլլալու Աստուածաշնչական նիւթերուն

Nous invitons nos chers fidèles à participer à ces séances d'interprétations bibliques.

Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն

Une collation de café et de thé est servie

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը

Nous comptons sur votre participation massive

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Սիրելի հաւատացեալներ,
հաճոյքով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.ե. ժամը 3:

PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard stret, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2